

**ՊԱՐԶԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՈՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՉՐԱՆՑ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՐԶԱԿՈՍ**

Ս. Ս. ԶՈՇԱՍԱՇՅԱՆ

Դարձվածները ոչ միայն պատկերավոր կերպով ոճավորում են խոսքը, այլև նրան տալիս են գեղագիտական երանգ՝ ավելացնելով խոսքի հուզարտահայտչական հնարավորությունները և միևնույն ժամանակ արտահայտում են խոստողի զգացական վերաբերմունքը:

Դրանք ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում արտահայտելու խոստողի ամփջական ապրումներն ու առավելապես ընդգծելու տվյալ պահի՝ նրա տրամադրությունները¹:

Որպես պատկերավորության դրսևորման լավագույն միջոց՝ դարձվածներում համդես է գալիս փոխաբերությունը՝ վերախմաստավորումը, այսինքն՝ եթե սովորական նախադասությունների իմաստն առաջանում է նրանց բաղադրիչների գումարից, ապա դարձվածային միավորների տարբերակման չափանիշներ են համարվում նաև նրանց կայունությունը, իմաստային ամբողջականությունը, կառուցվածքային տարբերակների հնարավորությունները: Եթե որոշ դարձվածային միավորներում կարող են ոճական ինչ-ինչ միջոցներ չլինել, ապա պատկերավորությունն ու վերախմաստավորումը (փոխաբերությունը) յուրաքանչյուր դարձվածային միավորի համար պարտադիր է²:

Դարձվածների բազմաբնույթ կիրառությունը՝ որպես կենդանի խոսքի արտահայտչականությունը գրական երկին հաղորդելու հիմնական միջոց, դրանց ձևախմաստային, շարահյուսական, ոճական առանձնահատուկ դրսևորումները Հր. Մաթևոսյանի ստեղծագործությանը հաղորդում են թե՛ բացառիկ ինքնատիպություն, թե՛ ազգային հարուստ գունավորում: Հեղինակը հմտորեն օգտագործում է խոսակցական լեզվին հատուկ դարձվածները: Դրանք խոսքը դարձնում են ներգործուն, ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքին մեծ հնարավորություններ են ընձեռում արտահայտելու որևէ անհատի, երևույթի, իրողության վերաբերյալ և առավելապես ընդգծում խոստողի տվյալ պահի տրամադրությունները: «Դարձվածների, իբրև կայուն քառակապակցությունների, ամենայնուրահատուկ կողմն այն է, որ դրանք արտահայտում են այդ ժողովրդի գուտ ազգային, միայն նրան բնորոշ մտածողություն՝ կապված նաև կենցաղի, ազգային սովորույթների և ապրելակերպի հետ»³: Այսպես՝ «Աշնան արև» պատմվածքում Աղունի խոսքի ոճավորմանը նպաստում են նրա մտածողությանը համապատասխան նոր ու ինքնատիպ դարձվածները, որոնց մեջ էլ դրսևորվում են հեղինակային ոճի առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ «Նրա *աչքը ծանր է*, որսի գնացողները, եթե նրան տեսնում են, լուռ ետ են դառնում» (Ծ, 342): «*Աստծո անձեռքը* սև ամպի նման *գլխին*», «*Դե ձեռքները պարապ ետ չդրկես*» (Ի, 248): «*Ինքը մերկացավ մորից մերկ* և նրան տաքացրեց իրենով» (Ի, 356): «*Քո տնից էիր *աչքդ գոռ անում*, որ տեսնես աջո՞ղ է խփում, թե անաջող: Ու ասում էիր՝ երեխիս կերար, երեխիս հոգին կերայր*» (Ծ, 357): «*Ու *զիծ առ զիծ պատավեց** Աղունը» (Ի, 359)⁴:

¹ Տես Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 15:

² Տես Ա. Սուրբասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989, էջ 335:

³ Լ. Եզեկյան, Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 35:

⁴ Օրինակները ըստ Հր. Մաթևոսյան, Ծանոթը, Եր., 1978: Հր. Մաթևոսյան, Երկեր, I հ., II հ., 1985: Այսուհետև շարադրամքում կնշենք միայն էջերը:

Հատկապես հետաքրքիր են վերջին երկու դարձվածների կիրառությունները, որոնք նկարագրում են Ադունի տառապած կյանքի անցած օրերը: Ընդգծված դարձվածները նախադասություններում օգտագործվում են ընդմիջարկումներով, այսինքն՝ դարձվածներում բառեր ու կապակցություններ են ավելացել: «Ավելացումը պայմանավորվում է դարձվածի բովանդակության մասնավորումով՝ այն հաշվով, որ կատարելապես համապատասխանի խոսքային միջավայրին, նպաստի նկարագրության կոնկրետությանը, մտքի առավել դիպուկ արտահայտմանը»¹: Վիզը ծռել ժողովրդախոսակցական դարձվածով հերոսի հոգեվիճակն առավել բնորոշ ձևով արտահայտելու համար Մաթևոսյանն ավելացրել է «խնդրողական» բառը, որն արտահայտում է տվյալ դարձվածի առավել կարևորվող նրբիմաստը. այսպես՝ «Վիզն այնպես խնդրողական ծռեց» (278-2): Կամ՝ «Ինքը չէր գտնում այս մեծ աշխարհում իր տեղը» (352), «Այդքան վեհանձնություն չէր ունեցել, որ փոխարենը չլսելու տա բաշխման ու հացի մասին լեզվից պատահաբար թռածը» (350-2): Չէր գտնում իր տեղը, լեզվից թռածը դարձվածները բերված օրինակներում նույնպես օգտագործված են ընդմիջարկումներով: Այս ավելացումները տեղավորված են դարձվածների բաղադրիչների միջև, ամենևին չեն վնասում դրանց միասնությանը, ընդհակառակը, ուժեղացնում են խոսքի արտահայտչականությունը:

Մաթևոսյանի խոսքին ժողովրդական երանգավորում են հաղորդում հաճախակի գործածվող դարձվածները, որոնք առօրյա-խոսակցական ոճին բնորոշ լեզվական միավորներ են: «Դարձվածների գործածությունը ևս պայմանավորված է ստեղծագործության թեմատիկայով, խոսքի անհատականացման միտումով և անշուշտ՝ հեղինակի ոճի առանձնահատկությամբ»²:

Մաթևոսյանի հերոսներն ունեն աշխարհի մասին իրենց յուրովի պատկերացումները, ընկալումները, գնահատականները: Նրանք նաև անմիջական կրողներն են ժողովրդական, երևակայական, պատկերավոր մտածողության, ինչը վառ արտահայտված է հատկապես ժողովրդախոսակցական ոճի դարձվածներում, որոնք հերոսների խոսքի հիմնական բաղադրիչներն են:

Դարձվածներում հիմնական իմաստը կրող բաղադրիչներն առավել հաճախ լինում են մարմնի մասերի անուններ՝ գլուխ, ձեռք, աչք, քիթ, բերան, երես և այլն: Հատկապես գերակշռում են գլուխ բառով կազմված բաղադրիչները. ինչպես, օրինակ՝ գլխով անել (I, 14), գլուխ ցավեցնել (I, 59), գլուխ տանել (I, 48), գլուխը յուղել (I, 414), գլուխն աշխատել (I, 427), գլուխ դնել (I, 213), գլխին խփել (I, 111), գլուխը տաքացնել (I, 422) կամ՝ «Բավական է ինչքան սիբիրներում գլուխ պահեցիր» (I, 54) «- գլուխ մի տար... կնիկ ես քո կնիկությանը կաց» (I, 172) և այլն: Այս բաղադրիչի կիրառությունը մեծ է նաև բազմանդամ կառույցներում և եղանակավորող արժեք ունեցող դարձվածներում. ինչպես՝ ոտից գլուխ չափել (I, 215), գլխի վրայով տանել (I, 277), գլխին քար գցել (I, 370), չհասկացող գլխի ձեռք ընկնել (I, 382), գլուխը յուղ ու մեղրի մեջ լինել (I, 409) և այլն: Այս դարձվածները հանդես են գալիս իմաստային բազմազան ձևերով ու նրբերանգներով, և այդ բոլորն իրենց դրսևորումը գտնում են միայն խոսքի մեջ, տարբեր նախադասություններում: Օրինակ՝ գլխին խփել դարձվածը տարբեր նախադասություններում տարբեր նրբիմաստներ ունի, որն էլ խոսում է հեղինակի մեծ տաղանդի և լեզվական հմտությունների մասին: Օրինակ՝ «Կենդանին և մեռյալը» պատմվածքում օգտագործված դարձվածները տարբեր իմաստներ են արտահայտում և չունեն բառարանային այն իմաստը, որ արտահայտում է վերը նշված դարձվածը: Օրինակ՝ «Տղան գիտի, որ հերը հանգիստ է... եթե թուր ... վիզը գցի ու կախվի՝ հորն ստորաբար խաբած կլինի, հոր արդար գլխին թաքում խփած կլինի» (77) (նշանակում է՝ մեղքի տակ գցելով ցավ կպատճառի, անակնկալ հարված կհասցնի): «Մեկնիջերիցն էլ ծերունի է, բայց երիտասարդի գլխին խփել ու խլել է կնոջը» (111) (այսինքն՝ խաբել, հիմարացրել է) և այլն:

¹ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 25:

² Լ. Եզեկյան, նշվ. աշխ., Եր., 1986, էջ 33:

Պատկերավոր ու նկարագրական ձևով այլևայլ նշանակություններ են արտահայտում նաև *աչք*, *բերան*, *լեզու*, *ձեռք*, *սիրտ*, *ականց*, *ձայն*, երես բաղադրիչներով կազմված քայական դարձվածները՝ *լեզվին կապ դնել*, *երեսին մուր քսել*, *ձեռք գլուխը գցել*, *խոսքը խոսք բերել* և այլն:

Իրենց իմաստաքերականական բազմազան առանձնահատկությունների, քերականական կարգերի հարստության, կառուցվածքային տիպերի բազմազանության շնորհիվ հայերենի դարձվածաբանական համակարգում ամենամեծ կշիռն ու գործածության ամենալայն ոլորտն ունեն քայական դարձվածային միավորները:

Վերահմաստավորված քայական կառույցները առաջին հերթին բնութագրում են մարդկային գործունեության, ապրելակերպի, սովորույթների՝ իրար նկատմամբ ունեցած զանազան վերաբերմունքի, հարաբերությունների ու վարքագծի, ինչպես նաև հոգեկան ու ֆիզիկական վիճակի, մտավոր ու բարոյական բնութագրումների, ամենաբազմազան դրսևորումներ, որոնք արդյունք են ամենից առաջ կառույցի գերադաս անդամի՝ բայի վերահմաստավորման՝:

Քայական դարձվածային միավորներն օժտված են բային հատուկ քերականական կարգերով ու գործառույթով: Այսպես, որոշ դարձվածներ տարբեր պատմվածքներում գործածված են տարբեր եղանակների տարբեր ժամանակներով, տարբեր դեմքերով ու թվով: Հետևյալ օրինակում *ձեռ առնել* քայական դարձվածը գործածված է ըզձական եղանակի եզակի երրորդ դեմքով՝ «Հայրս հենց նրա համար է, որ ... Բաբին սաստի՝ երբ նրա հորը *ձեռ առնի* մի ինչ-որ շնիկատեր» (I, 136), մյուս դեպքերում՝ սահմանական եղանակի ժամանակային գրեթե բոլոր ձևերով, ինչպես՝ «Լավ են անում, նանի ջան, որ *ձեռ են առնում* ու ծիծաղում» (Շ, 360), «*Ձեռ ենք առնելու*, իսկ նա ննջելու է գլխարկն աչքերին» (I, 212), «Մի խումբ *ձեռ առավ* Գիբրորին» (I, 175), «Ինձ ոչ ոք էլ *ձեռ չի առել*» (I, 140) և այլն:

Ընդհանրապես, քայական ԴՄ-ները առաջին հերթին ստորոգյալի շարահյուսական պաշտոն են կատարում. «Գործերը հաջող էին գնում և *սիրտը խլրտում էր*» (I, 102), «...Կարծես հարցն *անցողակի* ինքը *չէր նետեր*» (I, 190), «... Ահա այս մարդը փողով *մաքրեց* իր *անունը*» (I, 377), «Չի ուզում վատը... ու *տալիս վառում է աչքը*» (I, 358), «Աբգարը, որ տանը թոռնիկին քնեցնում էր, պառավի *հոգու հետ խաղում...*» (I, 44), «Ալխոն *տող կախ գցեց*» (I, 165), «Գիշերը մտըր գնար, հետո էլ մի կերպ *արանքը ճղեց*» (I, 149), «Նրանք *սիրտ չեն առնում* բռնել» (I, 141), «Շունը ծերացել է՝ *գլուխը կտռնի, կզնա* կսատկի հանդերում» (I, 148), «Իշխոն էլ է *աչքը գցել* քաղաքին» (I, 144) և այլն:

Որոշ դարձվածային միավորներ ունեն նաև տարբեր լրացումների կիրառություն, ինչպես՝ «Ես էլ էսպես *անտեր շան* պես սրա-նրա դռանը» (Շ, 423), «Իմ տատը նրա *բարակ սրտի համար* էլ ջոկ էր լաց լինում» (Շ, 454), «Բանաստեղծների թո տոհմը... արևային երկիրը լցնում է *մուրր արահետներով* ու *բարի ավանակներով*» (Շ, 328), «*Թույլ միավորների* հզոր երանը» (Շ, 32), «...Այդ կինը իմ թիկունքում կար ... որպես *դարանակալ ճահիճ*» (Շ, 151), «Ինչպես փոխեն *իմ ախտավոր ոչխարը* օտար գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է» (Շ, 335):

Նույնքան պատկերավոր ու հետաքրքիր են նաև ենթակայական և հարակատար դերքայնեղծով կառույցները՝ «Գժբախտություններից, անվերջ դժբախտություններից *խեղճները շաղած* այս հայերը որդու դեմ դա՞վ շշմջացին, ... թե հեռվում սովորական բաներ էին գրուցում...» (I, 308), «Ամեն ինչ տեղը տեղին գնում է ... էստեղ են ասում՝ *յուղած ու փափուկ...*» (I, 133), «*Ծաղկած ծառին էլ գնաս ... կշորանա*» (I, 396), «...Չեր *մեջքը կուտորող* կաշառքն է լինելու...» (I, 108), «*խլրտացող սրտով* սա կպաշտպանի այն բրոնզը, որ պղնձից չէր գատվել» (I, 325): Ինչպես նաև՝ *պնչից թռած*, *երես առած*, *իրար անցած*, *ձեռը գլուխը գցած*, *տաշած քար*, *սատանի տարած*, *սելավի տարած*, *հարավի փոշին լիզել տալ*, *մեռնող ծիածան* և այլն:

⁷ Տե՛ս Խ. Բաղդկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 158:

Բայական դարձվածային միավորները կարող են նաև բայական անդամի լրացումներ լինել և հանդես գալ, օրինակ, ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով. «Չեղևները բափ տալով վերադառնալ» (I, 209), «Ճարքելով լաց լինել» (I, 233), «Մաքուր բերանով մտածել» (I, 260):

Խոսքը ոճավորելու, խոստի վերաբերմունքն ու զգացմունքներն արտահայտելու, խոսքին հուզարտահայտչական երանգ տալու անփոխարինելի միջոցներ են նաև եղանակավորող դարձվածային միավորները, որոնցից շատերը չունեն անվանողական արժեք և արտահայտում են խոստի իմացական կամ զնահատողական վերաբերմունքը: Մյուսը իրենց իմաստով, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով տարբերվում են անվանական և բայական արժեք ունեցող դարձվածային միավորներից և հիմնականում հաղորդակցական արժեք ունեն. դրանց ճնշող մեծամասնությունը հարաբերակից է նախադասություններին⁶: «- Ստածով՝ որջ լինենք» (Շ, 290), «Հերիք է, լավը ջան, ջրի չափ կյանք ունենա» (Շ, 248), «-Միմոնիս կոներին մատաղ,- ասաց պառավը» (Շ, 344), «Սամվելիս ցավը տանեն, լավերը շուտ են մեռնում» (Շ, 343):

Բոլոր տեսակների դարձվածներից թերևս եղանակավորներին է ավելի հատուկ խոսքային միջավայրն ու հնչերանգը, որոնք հաճախ վճռական նշանակություն են ունենում սրանց իմաստների և գործառության հարցերում: Ինչպես «Տեր աստված...» (Շ, 104), «- Այ քեզ բա՛ն...» (Շ, 132), «Գերի են տանում, բանեցնում են, իսկ գերին դու մի ասա այնքան էլ մրջյուն չի, համարյա թե մարդ է...» (Շ, 51), «Չէ՛ մի» (Շ, 199), «Չէ, չէ՛ մի» (Շ, 165):

Եղանակավորող ԴՄ-ներում բաղադրիչների բառային իմաստները ոչ միայն մարում են, այլև, ի տարբերություն մյուս ԴՄ-ների, այլաբանական իմաստներից էլ են զրկվում և ձեռք են բերում զուտ զգացմունքային երանգ:

Ինչպես, օրինակ՝ «... երբ ուզես՝ աչքիս վրա» (Շ, 276), «-Ոչինչ,- ասացի ես, շատ բարի» (Շ, 137), «- Վանքերեցի,- կանչում էին, է՛ վերևներից,- երեսիդ կարոտ մնացինք...» (Շ, 349), «Ստածու կրակ...» (Շ, 116), «Մեռնեն ճարտար լեզվիդ...» (Շ, 375):

«Եղանակավորող բառերի նման եղանակավորող դարձվածներն էլ ունեն ոճական մեծ արժեք և զուրկ են ձևաբանական հատկանիշներից, չունեն հոլովման, խոնարհման հարացույցներ, օծոված չեն նաև քերականական այլ կարգերով: Սակայն եղանակավորող բառերից դարձվածները տարբերվում են նաև իրենց բառակապակցություն լինելու հանգամանքով, այդ պատճառով էլ սրանց առանձին բաղադրիչները, լինելով տարբեր խոսքի մասեր, երբեմն հենց կապակցության մեջ էլ հանդես են բերում տվյալ խոսքի մասին հատուկ քերականական որոշ կարգերի դրսևորում, որոնք երբեմն ամբողջ դարձվածի համար վճռորոշ նշանակություն են ունենում»⁷: Այսպես, օրինակ, եղանակավորող դարձվածների մի մասի (հատկապես անեծքների ու օրհնանքների) գոյական բաղադրիչներին հատուկ է ստացական հոդ ստանալը. այդ հոդը երբեմն կարող է փոխել կամ շրջել ամբողջ դարձվածի իմաստը, ինչպես՝ աչքս թող դուրս գա (Շ, 358), (այս դարձվածը Ս ստացական հոդով ավաստանքի զգացում է արտահայտում, իսկ Դ-ով՝ անեծքի՝ աչքը թող դուրս գա և այլն), օրինակ՝ ձեռքդ բերանիդ հասա՞վ (Շ, 347), սեպերդ ինչ՞ ես բաց արել (Շ, 426), խիղճդ մեռնի (Շ, 264), մահը բուկդ բոնի (Շ, 249), քթիցդ գա էղ կերածդ հացը (Շ, 192): Իսկ որոշիչ հոդը եղանակավորող ԴՄ-ներում որոշիչ դեր չի խաղում. դրանցից շատերը գործածական են առանց որոշիչ հոդի, միայն սահմանափակ թվով կառույցներում այն հանդես է գալիս որպես կառույցի գոյական բաղադրիչի անբաժանելի մասնիկ. ինչպես՝ գլուխը քարին է տալիս (198-Շ), մահը կույր է լինում (450-Շ) և այլն:

Ս և Դ հոդերը դարձվածակազմիչ նշանակություն ունեն որոշ եղանակավորող դարձվածների համար. կան մի քանի ԴՄ-ներ, որոնք ձևավորվում են Դ հոդով, և արհամարհանք են արտահայտում. այսպես՝ երեսդ դեմ էիր արել (Շ, 344), տղա եք տեսնում՝ բերաններից բաց նայում եք (Շ, 432), քթիցդ գա էղ կերածդ հացը (Շ, 192) և այլն: Եղանակավորող

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 54:

⁷ Նույն տեղում, էջ 56:

ԴՄ-ների իմաստային ու ռճական տարբերությունը մյուսների նկատմամբ այն է, որ սրանցում այնքան վերաիմաստավորում չկա, որքան խոսողի զգացական, գնահատողական վերաբերմունք: Եղանակավորող ԴՄ-ների միջոցով խոսողը իրողության նկատմամբ արտահայտում է տարբեր վերաբերմունքներ: Հր. Մաթևոսյանի արձակում հանդիպող եղանակավորող դարձվածների միջոցով արտահայտվում է նաև՝ ընդհանուր վերաբերմունք. ինչպես, օրինակ՝ զիջական բնույթի՝ գործ չունես (Ծ, 264), ինչ գործ ունես (Ծ, 262), գլուխ չունես (Ծ, 357), անցած բանի ետևից չես ընկնի (Ծ, 127), երկբայական բնույթի՝ ես ինչ իմանամ, չգիտես ինչ (Ծ, 219), աստված գիտի (Ծ, 127), սաստկական բնույթի՝ մի բուռ դարձած (Ծ, 399), բռան մեջ վերցրեց սիրտը (Ծ, 87), զոռից գլուխը ծակվեց (Ծ, 192), սիրտը փուլ եկավ (Ծ, 204), սիրտը փորում տրաքել է (Ծ, 438), սրտի լարը կտրվում է (Ծ, 392), սիրտը կտորած (Ծ, 134) ԴՄ-ները: Չիջական և երկբայական եղանակավորող դարձվածներով հեղինակը մի դեպքում իրողության հետ իր համակերպվողական վերաբերմունքն է արտահայտում, մյուս դեպքում՝ երկբայական, թեական: Այս տիպի դարձվածային նախադասությունները ավելի մեծ հուզաարտահայտչական լիցք ու ներգործում ուժ ունեն և ռճական ավելի ակտիվ կիրառություն:

Ժողովրդական խոսքին հատուկ է նաև գործողության քազմակիություն կամ տևականություն ցույց տալը: Դրա համար կրկնվում է դարձվածային արտահայտության առանցքային բառը, որի միջոցով դրսևորվում է արտահայտչականություն, և վերաիմաստավորված խոսքն ավելի ընդգծվում, շեշտվում է: Օրինակ՝ *աչքն աչքին* նշանակում է ակնհայտ կերպով, նաև համառորեն, ամամոթաբար (որև՛ բան անել). «Դրա հետ *գլուխ դնել* չէր լինի, մի քոստո գառ հրեցի առջևը՝ բանի տեղ չդրեց. պտտեց, պտտեց, *աչքը աչքիս* պտտեց, թափով խփվեց հոտի մեջ, որձի մոտից թռավ՝ որձը մնաց անդմակ...» (Ծ, 63): Կամ՝ «Աբաղաղի կանչը կորավ գոռցի թանձր թաղիքի տակ... – Ժամը մեկն է,- ասաց Իշխանը: - Անտերը էշ չի, գործարան է, *տեղը տեղին* խփում է» (Ծ, 95): «Ինքը մայեց Մարտինին ու տեսավ, որ բանակային հագուստը նրա վրա *մազը-մազին* ճիշտ է մստած» (Ծ, 147):

Առաջին կառույցը (որտեղ կա նաև համեմատություն) փոխաբերաբար նշում է զանգի նպարբերաբար, ճիշտ նույն ժամին հնչելը, երկրորդ դեպքում հագուստի շատ սազելը ընդգծում է *մազը-մազին* դարձվածային կապակցությունը:

Երբեմն բայական դարձվածներում կրկնվում է անվանական քաղաղորիչը, ինչպես՝ «Թույլտվություն չվերցրած՝ *ոտը ոտի առջև չի դնի*» (Ծ, 162)- որև՛ բան չի անի, որև՛ տեղ չի գնա, «*խոսքը խոսք բերեց*, և նա իրեն չզսպեց.- Ավելորդը դու ես» (Ծ, 84): Կամ՝ «Ըն լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ,- քրթմնջաց Սիմոնը, հեռացավ պտտածողից, չիմացավ ինչ անի...» (411), «Ինձ մաշեցի, մաշեցի ու ինչի՞ տեր եմ» (Ծ, 360): Բնականաբար, այսպիսի դարձվածային միավորների գործածությունը թե՛ իմաստով ու կառույցի սեղմությամբ, թե՛ ռճական արժեքով շատ ավելի է կարևորվում:

Կրկնության մի տեսակն էլ դարձվածում հոմանիշ կամ իմաստով մոտ բառերի կողք կողքի գործածությունն է: Այսպես, հետևյալ օրինակում կրկնությունը շեշտում է հերոսի պարաս, անգործ լինելը և, դրանից բացի, ուրիշին ևս զբաղեցնելը, իզուր խանգարելը. «Անբա՛ն, անբա՛նի մեկը... *Բանից գործից ընկած՝* ինչ ես մեզ էլ էստեղ *բանից-գործից* գցում...» (Ծ, 97):

Հեղինակը երբեմն էլ դարձվածից դուրս ևս կրկնում է նրա որև՛, հաճախ բայական քաղաղորիչը՝ ստեղծելով վերաիմաստավորված գործողության տևականության տպավորություն. «Պատավը *ձեռքը բերանին մնաց*, մնաց (այսինքն՝ զարմացավ Ս.Թ.), հետո հարցրեց...» (Ծ, 172): Կրկնությամբ կազմված կառույցները մեծ մասամբ բայական ԴՄ-ներ են՝ կազմված գոյականի կրկնությամբ և տալ բայով. ինչպես՝ *ձեն ձենի տակ*, ուս ուսի տակ, գլուխ գլխի տակ և այլն, նաև՝ *աչքը աչքիս պտտեց*, *ինձ մաշեցի*, *մաշեցի*, *խոսքը խոսք բերեց* և այլն: Հաղորդակցական արժեք ունեցող եղանակավորող մի քանի դարձվածների անվանական քաղաղորիչի կրկնությամբ շեշտվում է քարկությունը, նախատինքը, զայրույթը և այլն:

Ինչպես տեսանք, ԴՄ-ների հետաքրքրական, երբեմն անսովոր գործառնությունները, իմաստաքերականական այլևայլ դրսևորումները, եղանակավորող դարձվածները հնարավորություն են տվել Հր. Մաթևոսյանին իր խոսքին հաղորդելու թարմություն, ինքնատիպություն, ինչպես նաև իմաստառճական համապատասխան երանգներ:

С. С. КОШАТАШЯН - Фразеологизмы и их стилистическая роль в прозе Гранта Матевосяна. - В прозе Гр. Матевосяна фразеологизмы встречаются как в речи автора, так и в речи героев, характеризуюя их, придавая яркость и экспрессивность стилю. Особый интерес представляют непривычные употребления, специфические семантико-грамматические проявления фразеологизмов, придающие стилю автора свежесть и своеобразие.